# Բացատրագիր

Արջերի և գայլերի նոր ազատավանդակի նախագիծը իրականացվել է համաձայն պատվիրատուի պահանջների: Նախագծի մշակմանը ներգրավված են եղել միջազգային մասնագետներ, այն հասել է իր ավարտուն տեսքին միջազգային մասնագետների հետ քննարկման, հիմնվելով EAZA-ի պահանջներին և ՀՀ քաղաքաշինության շին.նորմերին:

Նախագծով նախատեսվում է մեծացնել գոյություն ունեցող արջերի ազատավանդակը բաժանվելով 3 հատվածների երկրորդ հատվածը զարգանում է լանջով դեպի ձախ, իսկ երրորդ հատվածը զարգանում է դեպի լանջի վերին հատված: Այդ հատվածները միմիյանց են միանում երկու անցումներով-առաջինը լինում է կից արջերի որջին, իսկ երկրորդը նոր նախատեսվող ճանապարհ-արահետի վերևով: Այն լինելու է խողովակաձև և գտնվելու է ճանապարհից 3մետրնվազագույն բարձրության վրա: Անցման մետաղական էլեմենտները փոշեներկվում են կոռոզիայից խուսափելու համար:

Նախատեսվում է իրականացնել նաև արջերի մեկ որջ, լանջի միջնահատվածում կենդանիներին անհրաժեշտության դեպքում առանձնացնելու համար, այնտեղ կարող են առանձնացվել չորս կենդանի:

Ազատավանդակի ներսում նախատեսվում է իրականացնել գետակ, որը սկիզբ կառնի կենդանիների խողովակաձև անցման եզրից՝ կասկադային ջրաղբյուրով և անցնելով ազատավանդակի տարածքով կմիանա գոյություն ունեցող արջերի ազատավանդակի գետին:

Նախագծով նախատեսվում է իրականացնել գլխավոր ճանապարհին կից երկրորդական ճանապարհ-արահետներ 2÷2,5 մետր լայնությամբ, սկիզբ առնելով այգու ստորին հատվածից կբարձրանա լանջի միջնահատված և կմիանա այգու վերին հատվածում հիենայի ազատավանդակի հարակից ճանապարհի հատվածին: Լանջը ունենալով բավականին թեքություն և որոշակի հատվածներում ժայռային գրունտ առաջացնելու է բարդություններ շինաշխատանքների ընթացքում և իրականացվելու են մեծ ծավալով հողային աշխատանքներ: Ճանապարհին նախատեսվում է ցայտաղբյուր և նստարաններ տեղադրելու հարթակներ:

Ազատավանդակում կենդանիներին տեսանելություն ապահովելու համար նախատեսվում է երկու դիտահարթակ, որոնցից մեկը լինելու է երկու մակարդակով:

<u>Շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ</u>

Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին. կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:

<u>Աշխատանքերն իրականացնելու համար պահանջվող լիցենզիաներ</u>

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների

1. Բնակելի,հասարակական և արտադրական
2. Հիդրոտեխնիկական
3. Էներգետիկ
4. Կապի

<u>Աշխատանքային ռեսուրսներ</u>

1. Աշղեկ՝ Ինժեներ-շինարար «ԱՔՇ», առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
2. Ինժեներ-հիդրոտեխնիկ,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
3. Ինժեներ-Էլեկտրոտեխնիկ,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
4. Կապի ինժեներ, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով

<u>Տեխնիկական միջոցներ</u>

1. Ինքնաթափ ավտոմեքենա 1 հատ
2. Էքսկավատոր 1 հատ
3. Բետոնախառնիչ 1 հատ
4. Բետոնամղիչ 1 հատ
5. Ավտոկռունկ 1 հատ

| Չափ.մ. | Մաս.թ. | Թերթեր | Փաստ. | Ստորագր. | Ամսաթիվ | Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան /N ԵՔ-ԲԸՅԱՇՁԲ-16/ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| ՆԳճ | | Հ. Հովսեփյան | | | | Երևանի կենդանաբանական այգու Արջերի և գայլերի նոր ազատավանդակի նախագիծ | Էտապ | Թերթ | Թերթեր |
| Ճարտարապետ | | Ա. Օրբազյան | | | | | ՃՇ | 2 | 68 |
| Նախագծող | | Ն. Սարդարյան | | | | Ընդհանուր տվյալներ | <<Սուֆետ>> ՍՊԸ | | |